

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

05.02.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ.Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյան - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյան, Ա.Օհանյանը, Ա.Աղլոյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերդյանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Դոխտյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Զեկ. Ն.Սարգսյան/
2. ա) Մարզպետի հաշվետվության մասին
բ) Փետրվարի երկրորդ կեսին ՀՀ նախագահի մոտ կայանալիք հանդիպման օրակարգային հարցերի մասին
գ) Աշխատակազմի հաշվետվությունների ամփոփման մասին
/Ա.Նալբանդյան/
3. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին
/Զեկ. մարզպետի տեղակալներ/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Զեկ. Հ.Պապոյան/
5. Ձմեռային զորակոչի աշխատանքների մասին
/Զեկ. Ս.Ղուբաթյան/

Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ղ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բաղդոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքներում հողի հարկի, հողի և գույքի վարձակալության ու աղբահանության վարձավճարների գանձման գործընթացի իրականացման նկատմամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ.Ասլանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին՝

Եռօրյա ժամկետում ամփոփել և անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների հաշվետվությունների ժամանակ տրված հանձնարարականների և անելիքների կատարման նկատմամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Ըստ ոլորտների ներկայացնել անհրաժեշտ տեղեկանքներ և հաշվետվություններ մարզպետի կողմից տրվող ամենամյա հաշվետվության և ՀՀ Նախագահի մոտ կայանալիք հանդիպման օրակարգային հարցերի վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ս. Ղուբայանին՝

Առաջարկել համայնքների ղեկավարներին համագործակցել տարածքային զինվորական կոմիսարների հետ, օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքներում կցագրման աշխատանքները իրականացնելու նպատակով:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ